Հայաստանի Հանրապետության նախագահ
Սերժ Սարգսյանին

Դիմող՝ Արմենակ Ափինյան
հասցե՝ Լանջային 24
հեռ.՝ 094446871

Դիմում

Ես՝ Արմենակ Ափինյանս, լինելով ՀՀ քաղաքացի խնդրում եմ այս հարցին մոտենալ աչալուրջ և հետևողական:

Իմ որդին՝ Նարեկ Ափինյանը, օգոստոսի 17-ի գիշերվա 12-ից մինչև առավոտվա 5-ը գտնվել է Վանաձոր քաղաքի ոստիկանության բաժնում և այդ ընթացքում ոստիկանների կողմից ենթարկվել է խոշտանգումների և ստորացման, որի մասին գրված է Նարեկ Ափինյանի ցուցմունքի մեջ:

Բողոքից երեք օր անց նրան համոզել են բողոքը փոխել և տղաս, գտնվելով վախի և հոգեկան խախտվածության մեջ, փոխել է ցուցմունքը, բայց հաջորդ օրը իմ հետ խորհրդակցելուց հետո եկավ այն գիտակցության, որ այդ բարբարոսներին պետք է ենթարկել պատասխանատվության, և նորից գործին ընթացք տվեց: Ու քանի որ մեր քաղաքը փոքր է և ձեր աչքից հեռու, մեզ կարող են վնասել այդ հանցագործ ոստիկանները, ուստի, որպես ՀՀ նվիրյալ և օրինապաշտ քաղաքացիներ ..., խնդրում եմ ապահովել մեր անվտանգությունը և հնարավորինս շուտ:

Փորձեմ հիմնավորել նվիրյալ և օրինապաշտ բառերի նշանակությունը: 1990 թվականին, երբ մեր հայրենիքին վտանգ էր սպառնում, ես իմ անձնական գումարով զենք եմ գնել և իմ կյանքով պաշտպանել եմ այն (Այդ մասին կարող է վկայել Պարույր Հայրիկյանը): Տաս տարի Ամերիկայից դոլար եմ ուղարկել Հայաստան և չեմ ուրացել հայրենիքս: Ապրել եմ ՀՀ անձնագրով, ունեցել եմ ուղիղ եթեր հեռուստահաղորդաշարեր, որտեղ փորձել եմ սատար կանգնել հայմարդուն և հայրենիքին: նախագահական ընտրություններին օգնել եմ մարդկանց ազատ և ճիշտ ընտրություն կատարել, հեղինակ եմ բազմաթիվ բանաստեղծությունների և աֆորիզմների, որոնցից մեկը կներկայացնեմ ձեր ուշադրությանը՝ «Ճշմարիտ առաջնորդը լսում է ժողովրդի ձայնը, այլ ոչ թե՝ իր քծնողների»:

Տղաս ծառայել է Լեռնային Ղարաբաղում՝ որպես օրինակելի սահմանապահ և այսքանից հետո ենթարկվում է խոշտանգումների ու ստորացման ոստիկանության աշխատակիցների կողմից: Մեր թշնամիներն այդ օրենքի ներկայացուցիչներն են, որ ատելություն են ներարկում հայ քաղաքացուն դեպի իր կառավարությունը, և ժողովուրդը հայհոյում է ոչ թե նրանց, այլ Ձեզ, պարո՛ն նախագահ, քանի որ առջևում Դուք եք:

Պահանջում եմ պատժել անօրեն ոստիկաններին (մասնավորապես՝ Արամ Ղազարյանը, Արտյուշա Հարությունյանը և այլոք)՝ մասսայական և խիստ, որպեսզի դաս լինի և մյուսներին:

Համոզված եմ, որ ձեզ չեն կարող միջնորդել, որպեսզի աչք փակեք կատարվածի հանդեպ:

Կից ներկայացնում եմ

1. *Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի՝ ՀՀ գլխավոր դատախազին ուղղված հանցագործության մասին 22.08.2012թ. հաղորդման պատճենը.*
2. *ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ Ա. Միրզոյանին ուղղված 23.08.2012թ. դիմումի պատճենը:*

Հարգանքներով, հույսով և հավատով՝

Արմենակ Ափինյան

27.08.2012թ.